Այսօր տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի հերթական նիստը, որը վարել է հանձնաժողովի նախագահ Սիմոն Տեր-Սիմոնյանը:

Հանձնաժողովը քննարկել է 11 բարեգործական ծրագիր: Մասնավորապես, քննարկվել և հաստատվել են՝

«Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիտավան գյուղի դպրոցի տարածքում տարրական դասարանների մասնաշենքի կառուցում», «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի թիվ 4 միջնակարգ դպրոցի կահավորում», «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան գյուղի միջնակարգ դպրոցի կահավորում» և «Երևան քաղաքի «Նորք տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի մասնակի վերանորոգում» ծրագրերը.

«Վորլդ Վիժն Ինտերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Շինարարական նյութերի մատակարարում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի երեք համայնքներ», «Մարզական գույքի մատակարարում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի հինգ համայնքներ», «Կահույքի մատակարարում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի յոթ համայնքներ», «Շինարարական նյութերի և օժանդակ մասերի մատակարարում Արտենի համայնքի ներքին ոռոգման ցանցի վերանորոգման համար» և «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Բենիամին գյուղի խմելու ջրագծի անցկացում» ծրագրերը.

Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության կողմից իրականացվող «Ավետիսյան դպրոցի կառուցում» ծրագիրը.

«Կյանքի հաց» հասարակական բարեգործական կազմակերպության կողմից իրականացվող Ժորա և Մարի Հունանյանների հիշատակին նվիրված «Միայնակ և անապահով ծերերի խնամք» ծրագիրը:

Նիստում քննարկվել և հաստատվել են նաև նախկինում հաստատված ծրագրերի շրջանակներում իրականացվող հարակից գործարքներ և տարբեր կազմակերպությունների հասցեներով ստացված բարեգործական բեռների ներմուծման ծրագրեր: